

## «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

Երևան, 6 մայիսի, 2015 թ.

### Մամուլի հաղորդագրություն

#### Հայաստանն ըստ «2015թ. Զբոսաշրջության մրցունակության զեկույցի» զբոսաշրջության մրցունակությամբ 89-րդն է 141 երկրների շարքում

Ըստ Զբոսաշրջության մրցունակության համաթվի Հայաստանի դիրքը 2013 թվականի հետ համեմատ 10 տեղով նվազել է: Արդեն վեցերորդ անգամ է, ինչ Հայաստանը ներգրավվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող Զբոսաշրջության մրցունակության զեկույցում: Զբոսաշրջության ոլորտում աշխարհի ամենամրցունակ երկրների ցանկը այս տարի գլխավորում են Իսպանիան, Ֆրանսիան և Գերմանիան:

#### Զբոսաշրջության մրցունակության համաթիվ


Զբոսաշրջության մրցունակության համաթիվը, որը համակողմանիորեն գնահատում է երկրների մրցունակությունը զբոսաշրջության բնագավառում, բաղկացած է 4 ենթահամաթիվից, որոնք հաշվարկվում են 14 հենասյունների գնահատականների հիման վրա:

#### Զբոսաշրջության մրցունակության համաթիվ

<b>Ենթահամաթիվ 1</b> Զբոսաշրջությանն աջակցող միջավայր	<ul style="list-style-type: none"><li>• Գործարար միջավայր</li><li>• Սպառողականություն և անվտանգություն</li><li>• Սանիտարահիգիենիկ պայմաններ և առողջապահություն</li><li>• Մարդկային ռեսուրսներ և աշխատաշուկա</li><li>• ՏՀՏ պատրաստվածություն</li></ul>
<b>Ենթահամաթիվ 2</b> Զբոսաշրջության քաղաքականություն և աջակցող պայմաններ	<ul style="list-style-type: none"><li>• Զբոսաշրջությանն առաջնայնություն տալը</li><li>• Միջազգային բացություն</li><li>• Գնային մրցունակությունը զբոսաշրջության բնագավառում</li><li>• Շրջակա միջավայրի կայունություն</li></ul>
<b>Ենթահամաթիվ 3</b> Զբոսաշրջության ենթակառուցվածքներ	<ul style="list-style-type: none"><li>• Օդային տրանսպորտի ենթակառուցվածք</li><li>• Վերգետնյա տրանսպորտի ենթակառուցվածք</li><li>• Սպասարկման ենթակառուցվածք</li></ul>
<b>Ենթահամաթիվ 4</b> Զբոսաշրջության մշակութային և բնական ռեսուրսներ	<ul style="list-style-type: none"><li>• Բնական ռեսուրսներ</li><li>• Մշակութային ռեսուրսներ և գործարար ուղևորություն</li></ul>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԵՆԹԱՀԱՄԱԹՎԵՐԻ


### Չբոսաշրջությանն աջակցող միջավայր



\*Լշում՝ Գործարար միջավայր հենասյուները ներկայացնում է Նախկին Օրենքներ և կանոնակարգեր հենասյուներ՝ ընդարձակված ցուցանիշների ցանկով:

Այս ենթահամաթվի առումով Հայաստանի դիրքը վատթարացել է 6 տեղով (57-րդ տեղ): Հայաստանում վիճակը բավականին բարվոք է սանիտարահիգիենիկ պայմանների և առողջապահության, ինչպես նաև ապահովության և անվտանգության առումով, սակայն ՏՀՏ պատրաստվածության և գործարար միջավայրի հենասյուները հարաբերականորեն ցածր ցուցանիշ են արձանագրել: Հայաստանի դիրքի վրա բացասաբար են ազդել հարկային միջավայրի ազդեցությունը ներդրումների վրա (104-րդ տեղ), շուկայում գերիշխող մասնակիցների առկայություն (93-րդ տեղ), տարրական դպրոցներում ներգրավվածության աստիճանը (119-րդ տեղ), անձնակազմի վերապատրաստման ցածր աստիճանը (118-րդ տեղ) և որակյալ աշխատուժ գտնելու դյուրին լինելը (112-րդ տեղ): Էական բարելավում է արձանագրվել խմելու ջրի հասանելիության (52-րդից 1-ին տեղ) և բիզնես սկսելու համար անհրաժեշտ օրերի քանակի ցուցանիշներում (33-րդից 8-րդ տեղ):

### Չբոսաշրջության քաղաքականություն և աջակցող պայմաններ




\*Լշում՝ «Միջազգային բացություն» հենասյուները նոր է և չի ընդգրկվել 2013թ. զեկուլյցում:

Հայաստանը զբոսաշրջության քաղաքականության և աջակցող պայմանների ենթահամաթվի առումով զբաղեցնում է 95-րդ տեղը: Այս ենթահամաթվի որոշ հենասյուներ վերցված են Նախկին զբոսաշրջության կանոնակարգող դաշտ ենթահամաթվի հենասյուներից: Հայաստանի


դիրքի վրա բացասաբար են ազդել շրջակա միջավայրի օրենսդրության խստության եւ կիրառման ցածր մակարդակը (համապատասխանաբար 111 եւ 122-րդ տեղեր), զբոսաշրջիկների ներգրավմանն ուղղված մարքեթինգի արդյունավետությունը (117-րդ տեղ), զբոսաշրջության զարգացման կայունությունը՝ բնապահպանական տեսանկյունից (111-րդ տեղ), ավիատոմսերի հարկերը և օդանավակայանի վճարները (126-րդ տեղ): Որոշ բարելավում են արձանագրել զբոսաշրջության տվյալների համապարփակության (59-րդից 49-րդ տեղ), գնողունակության համարժեքության (47-րդից 41-րդ տեղ) և վառելիքի գների մակարդակի (57-րդ-ից 48-րդ տեղ) ցուցանիշները:

**2բոսաշրջության ենթակառուցվածքներ**



Այս ենթահամաթիվը տրոհվել է նախկին զբոսաշրջության բիզնես միջավայր և ենթակառուցվածք համաթվից: Օդային տրանսպորտի ենթակառուցվածքն արձանագրել է վատթարացում 7 տեղով (85-րդից 92-րդ տեղ): Այս փոփոխության վրա նշանակալի ազդեցություն է ունեցել օդանավակայանից մեկնածների քանակը 1,000 բնակչի հաշվով ցուցանիշը (74-ից 119-րդ տեղ): Հայաստանը հետ է մնում նաև վերգետնյա տրանսպորտի բաղադրիչների՝ ճանապարհների, երկաթուղիների, մոտակա նավահանգիստների որակով (համապատասխանաբար 80-րդ, 67-րդ և 132-րդ տեղեր): Եական բարելավում է արձանագրվել սպասարկման ենթակառուցվածքի (80-ից 73-րդ տեղ) հենասյան ցուցանիշներով՝ հյուրանոցների տեղերի քանակ (111-ից 62-րդ տեղ), «Visa» քարտեր ընդունող բանկոմատների թիվ (66-ից 46-րդ տեղ):

**2բոսաշրջության մշակութային և բնական ռեսուրսներ**



Բնական ռեսուրսների հենասյունով Հայաստանի դիրքը նվազել է 124-ից 136-րդ տեղը: Ենթահենասյուններից զգալի նվազել է բնական միջավայրի որակը (118-ից 125): Ավելացել է

Նոր ցուցանիշ՝ բնական զբոսաշրջության նկատմամբ թվային պահանջարկը, որով Հայաստանն ունի զգալի ցածր դիրք՝ 125-րդ տեղ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԸ՝ ԱՊՅ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏԱԾ

### Չբոսաշրջության մրցունակության համաթիվ

Երկիրը	Համաթվի արժեքը	Չբաղեցրած դիրքը (141 երկրների շարքում)	Դիրքի փոփոխությունը 2013-2015 թթ.
ՌԴ	4.08	45	+18
Վրաստան	3.68	71	-5
Ադրբեջան	3.48	84	-6
Ղազախստան	3.48	85	+3
Մոլդովա	3.16	111	-9
Դոմինիկյան	3.08	116	-5
Տաջիկստան	3.03	119	-5
<b>Հայաստան</b>	<b>3.42</b>	<b>89</b>	<b>-10</b>

2015թ.-ին վերոնշյալ երկրների խմբում զբոսաշրջության բնագավառում ամենամրցունակ երկիրը շարունակում է մնալ Ռուսաստանը (45-րդ տեղ)՝ բարելավելով իր դիրքերը 2013թ. նկատմամբ 18 տեղով:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Չնայած Հայաստանի դիրքի նվազման՝ առկա են որոշակի դրական զարգացումներ զբոսաշրջության մրցունակության բնագավառում, մասնավորապես սպասարկման ենթակառուցվածքի ցուցանիշներով՝ հյուրանոցների տեղերի քանակ և վիզա քարտեր ընդունող բանկոմատների թիվ: Բարելավում են արձանագրել նաև զբոսաշրջության տվյալների համապարփակության, գնողունակության համարժեքության և վառելիքային գների մակարդակի ցուցանիշները:

Այսուհանդերձ, առկա են մի քանի կարևոր մարտահրավերներ, որոնք խոչնդոտում են զբոսաշրջության ոլորտում Հայաստանի մրցունակության աճին, այդ թվում՝

- Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների ընդհանուր վիճակի ու պահպանման ցածր մակարդակ
- Չբոսաշրջության առաջնության ուղղված մարքեթինգային ջանքերի ցածր արդյունավետություն
- Ավիատոմսերի բարձր հարկեր և օդանավակայանի վճարներ
- Անձնակազմի վերապատրաստման ցածր աստիճան և որակյալ աշխատուժի պակաս

Չբոսաշրջությունը Հայաստանի տնտեսության գերակա ոլորտներից մեկն է, և վերոնշյալ հիմնախնդիրների լուծումն էական նշանակություն կունենա ոչ միայն զբոսաշրջության, այլև երկրի ընդհանուր տնտեսական զարգացման համար:

## **Չբոսաշրջության մրցունակության զեկուլյցի մասին**

Չբոսաշրջության համաշխարհային մրցունակության զեկուլյցն առաջին անգամ տպագրվել է 2007թ-ի մարտի 1-ին Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից (ՅՏՖ): ՅՏՖ-ը երկրների Չբոսաշրջության մրցունակությունը գնահատելու նպատակով մշակել է Չբոսաշրջության մրցունակության համաթիվը: Այն բազմաչափ վերլուծություն է երկրի՝ որպես Չբոսաշրջության կենտրոնի, համեմատական ուժեղ և թույլ կողմերը գնահատելու տեսանկյունից: Համաթվի հաշվարկման ժամանակ օգտագործվել են Չբոսաշրջության ոլորտի ամենահամապարփակ տվյալների հենքերը՝ ինչպես «կոշտ տվյալներ» (WTTTC; UNWTO), այնպես էլ հարցումների միջոցով ստացված տվյալներ: Չեկուլյցի պատրաստման գործին աջակցում են գործընկեր կազմակերպությունները՝ Booz & Company, Deloitte, IATA, IUCN, UNWTO, WTTTC, և գործընկեր ինստիտուտների (հետազոտական) համաշխարհային ցանցը: Հայաստանում ՅՏՖ-ի գործընկեր կազմակերպությունն է հանդիսանում «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը:

### **«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն**

«Տնտեսություն և արժեքներ»-ը՝ «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության հետազոտական թևը, մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների և խորհրդատուների ցանցի միջոցով: Կենտրոնի մասնագիտացումը մրցունակության համակողմանի ուսումնասիրությունն է մակրո և միկրո մակարդակներում, կենտրոնանալով հետևյալ հիմնական ուղղությունների վրա՝ ազգային տնտեսական և ճյուղային ռազմավարություններ, օտարերկրյա ներդրումներ, սփյուռքի ցանցեր և արժեքները գործարար և հանրային ոլորտներում:

«Ի-Վի Քոնսալթինգ»-ը գործարար խորհրդատվական, հետազոտական և ֆինանսական միջնորդի ծառայություններ է մատուցում նորարարության և մրցունակության ավելի բարձր մակարդակի ձգտող կազմակերպություններին:

Հայաստան, ք. Երևան 0010,  
Մելիք-Ադամյան 2/1  
Հեռ.՝ +374 10 546 434

[info@evconsulting.com](mailto:info@evconsulting.com)

[www.evconsulting.com](http://www.evconsulting.com), [www.ev.am](http://www.ev.am)